

Ռուբեն Հ. Մելքոնյան
Բանասիր. գիյր. թեկնածու

ՀՈՒՅՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՍՏԱՄԲՈՒԼԻՑ 1964 ԹՎԱԿԱՆԻՆ*

Բանալի բառեր – երիտթուրքեր, քեմալականներ, ոչ թուրք փոքրամասնություններ, Լոզան, ստամբուլաբնակ հույներ, այլամերժ քաղաքականություն, միատարր Թուրքիա, Հունաց պատրիարքություն, Կիպրոս, արտաքսում:

Մուտք

Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրության պատմությունը լի է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իրականացված պետական հալածանքի, խտրականության, ունեզրկման, կոտորածների և ցեղասպանությունների օրինակներով: Հատկապես երիտթուրքերի կառավարման տարիներին էլ ավելի ցայտուն էր դարձել երկիրը միատարր, այն է՝ թուրք իսլամական դարձնելու մոլուցքը:

Այս նույն մտածելակերպը և գործելակերպը փոխանցվեց նաև Թուրքիայի Հանրապետության իշխանություններին և սա կարելի է բացատրել երկու հանգամանքով. նախ թուրքական պետությունը ինստիտուցիոնալ առումով այլամերժ էր և թշնամաբար էր վերաբերվում ոչ թուրք բոլոր ազգություններին: Երկրորդ՝ 1923 թ. ստեղծված Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների, ղեկավար կազմի, պետական բյուրոկրատիայի զգալի մասը նախկին երիտթուրքեր էին, որոնք էլ հենց շարունակում էին արդեն ավանդական՝ այլամերժ և ցեղասպան քաղաքականությունը: Ինչպես Թուրքիայի առաջին նախագահ Մուսթաֆա Քեմալը, այնպես էլ երկրորդ և երրորդ նախագահներ Իսմեթ Ինյոնյուն, Ջելալ Բայարը երիտթուրքեր էին: Այսօր արդեն շատ պատմաբաններ, այդ թվում և թուրք կամ ծնունդով Թուրքիայից (Թաներ Աբչամ, Սելիմ Դերինգիլ, Այշե Հյուր, Սայիթ Չեթինօղլու, Նևզաթ Օնարան և ուրիշներ), հենվելով ճշգրիտ փաստերի վրա հստակ հայտարարում են, որ քեմալական իշխանությունները երիտթուրքերի շա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 26.01.2018:

րունակությունն էին գաղափարական, աշխարհայացքային, գործելաոճի և անգամ կադրերի առումով:

Հոլանդացի հայտնի թուրքագետ Էրիկ Ցյուրխերը Թուրքիայում երիտթուրքական կառավարման շրջանը հասցնում է մինչև 1950-ը, այն հիմքով, որ մինչ այդ իշխած քենալական Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը երիտթուրքերի դե յուրե և դե ֆակտո շարունակողն էր ու քենալական ազգայնամուլական շարժման, գրեթե առանց բացառության, բոլոր գործիչները նախկին երիտթուրքեր էին¹:

Մեկ այլ հայտնի պատմաբան Հանս-Լուկաս Քայզերը, իր հարցազրույցներից մեկում խոսելով թուրքական ազգայնամուլության մասին, ուշագրավ գուգահեռներ է անցկացրել Մուսթաֆա Քեմալի և Թալեթի միջև ու նկատել. «Քեմալիզմի ետևում թաքնված է թալեթիզմը»²:

Երիտթուրքական ավանդույթի գաղափարախոսական և գործնական-քաղաքական շարունակականությունը մասնագետները իրավացիորեն դիտարկում են նաև ֆաշիզմի կամ մեր կարծիքով՝ ֆաշիզմի թուրքական տարբերակի համապատկերում: Այսպես, ըստ թուրքագետ-պատմաբան Վահրամ Տեր-Մաթևոսյանի. «Իրականում քենալականության գաղափարախոսական դրույթների կապը և կախվածությունը նախորդող երիտթուրքական ժամանակաշրջանից ունի բազմաթիվ անհերքելի «շարունակություններ»»³:

Ըստ թուրք պատմաբան Ուղուր Ունգորի՝ երիտթուրքական էթնիկ ձուլման քաղաքականությունը շարունակվել է 1913-ից մինչև 1950 թվականը⁴: Ունգորը նաև հղում անելով տարբեր ուսումնասիրությունների և աղբյուրների, նշում է, թե Թալեթին է պատկանում նաև ազգայնամուլական հայտնի կարգախոսը «Թուրքիան թուրքերինն է»⁵, որը հետագայում դառնալու էր հանրապետական Թուրքիայի ամենատարածված կարգախոսներից մեկը: Ի դեպ, խոսելով Մուսթաֆա Քեմալի և Թալեթի ու մյուս երիտթուրք պարագլուխների կապի մասին՝ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հենց Քեմալի նախագահության տարիներին հայ վրիժառուների կողմից սպանված երիտթուրք ոճրագործները պետականորեն հերոսացվեցին և նրանց ընտանիքներին տրվեցին հայկական թալանված գույքից մասնաբաժիններ ու նշանակվեց թոշակ⁶:

Կան նաև գիտնականներ, որ երիտթուրքական իշխանության փաստացի գոյությունը իրավացիորեն հասցնում են մինչև 1960 թ. և 1950-1960 թթ. իշխած Դեմոկրատական կուսակցությանը ևս համարում են երիտթուրքական գաղափարախոսության բացահայտ շարունակող: Օրինակ՝ թուրք պատմաբան Էմրե Քոնգարը, անդրադառնալով Դեմոկրատական կուսակ-

1 Տե՛ս **Zürcher E. J.**, Yenilenme ve Sessizlik: Savaş Sonrasında İttihatçıların ve Kemalistlerin Ermeni Soykırımına İlişkin Retorikleri // Soykırım Meselesi: Osmanlı İmparatorluğu'nun Son Döneminde Ermeniler ve Türkler, (Hazırlayanlar: Ronald G. Suny, Fatma M. Göçek, Norman M. Naimark), İstanbul, "Tarih Vakfı Yurt Yayınları", 2012, s. 408.

2 **Hans-Lukas Keiser**: "Türk milliyetçiliğinin asıl problemi Talat'tır", Agos, 21, 11, 2008.

3 **Տեր-Մաթևոսյան Վ. Հ.**, Ֆաշիզմի դրսևորումները Թուրքիայում. տեսության մի քանի հարցեր, Ժամանակակից եվրասիա, հատոր III (2), Եր., 2014, էջ 10:

4 Տե՛ս **Üngör U.Ü.**, "Türkiye Türklerindir": Doğu Anadolu'da Demografi Mühendisliği 1914-1945; // Soykırım Meselesi: Osmanlı İmparatorluğu'nun Son Döneminde Ermeniler ve Türkler, (Hazırlayanlar: Ronald G. Suny, Fatma M. Göçek, Norman M. Naimark), İstanbul, "Tarih Vakfı Yurt Yayınları", 2012, s. 382-383.

5 Նույն տեղում, էջ 391:

6 Այս մասին մանրամասն տես, **Մելքոնյան Ռ. Հ.**, Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրակասացողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2015, N 2 (199), էջ 61-71:

ցության կառավարման տարիներին և կոնկրետ՝ նախագահ Զելալ Բայարին, նշում է. «Անգամ 1950-ականներին կարելի էր նկատել «իթթիհաթական» արատավոր սովորույթները: Այդ տարիներին իշխանության ղեկին գտնվող Դեմոկրատական կուսակցությունից նախագահ Զելալ Բայարը (1883-1986 թթ.) լինելով հին իթթիհաթական ապահովում էր «Մենդերեսի շրջանի» (1950-1960 թթ. Թուրքիայի վարչապետ- Ռ.Մ.) և «երիտթուրքական» շրջանի օրգանիկ կապը»⁷: Ի դեպ, ուսումնասիրող Սայիթ Չեթինօղլուն մեջբերում է հենց Զելալ Բայարի խոսքը, որը գալիս է ապացուցելու վերը նշվածը. «Ես մինչև կյանքիս վերջ ապրել եմ որպես մի իթթիհաթական»⁸:

Մեր կարծիքով, սակայն, երիտթուրքական մտածողությունը շարունակվել է նաև ավելի ուշ. դրա որոշակի տարրեր բացահայտ կերպով առկա են նաև մերօրյա Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում և մտածելակերպում: Երիտթուրքների այս հիմնական նպատակի՝ միատարր Թուրքիայի ստեղծման և բոլոր ոչ թուրք ու հատկապես ոչ մուսուլման ժողովուրդների դեմ մտածված ու մշակված քաղաքականության կարևոր մի դրվագ տեղի է ունեցել 1960-ականների առաջին կեսին, երբ Թուրքիայի վարչապետն էր նախկին երիտթուրք և նախկին նախագահ (1938-1950 թթ.) Իսմեթ Ինյույուն: Նրա նախաձեռնությամբ թուրքական կառավարությունը 1964 թ. մարտի 16-ին սկսեց մի գործընթաց, որն ազգային-կրոնական փոքրամասնությունների, տվյալ պարագայում՝ հույների, համար ունեցավ ճակատագրական նշանակություն և դարձավ Թուրքիան հույն բնակչությունից «մաքրելու» վերջին ու որոշիչ ակորդը:

1. Միատարր Թուրքիայի ճանապարհի «հունական խոչընդոտը»

Նախ պետք է ընդգծել, որ 1923 թ. հռչակված Թուրքիայի Հանրապետության ղեկավարության կարևոր քաղաքական նպատակներից էր երկիրը քրիստոնյա բնիկ ժողովուրդների (հայեր, հույներ) վերջին բեկորներից «մաքրելը» և այդ ուղղությամբ իշխանությունները իրականացնում էին համակարգված քայլեր: Չնայած որ երկրի նախագահ Մուսթաֆա Քեմալը հռչակել էր բարեփոխումներ անելու իր մտադրության մասին, սակայն ինչպես նկատում է ուսումնասիրող և քաղաքական վերլուծաբան Վ. Մեյսոնը. «Քեմալը ցանկանում էր Թուրքիան դարձնել ժամանակակից եվրոպական պետություն, մինչդեռ նրա առաջին քայլը եղավ արևմտյան մտածողություն ունեցող իր քաղաքացիների մեծ մասին արտաքսելը»⁹: Մեյսոնը փորձում է տալ այդ քայլի տեսական հիմնավորումը և իրավացիորեն առանձնացնում է այն իրողությունը, որ քեմալականները հավատացած էին, թե Օսմանյան կայսրության անկման հիմնական պատճառը իբրև թե մշակութային բազմազանությունն (diversity) ու, այսպես կոչված, հանդուրժողականությունն են եղել և քեմալականների կարծիքով պետության երկարաժամկետ անվ-

7 Kongar R.E., 21. Yüzyılda Türkiye: 2000’li Yıllarda Türkiye’nin Toplumsal Yapısı, İstanbul, “Remzi Kitabevi”, 45. Basım, 2012, s. 135-136.

8 Çetinoğlu A.S., Ekonomik ve Kültürel Jenosid: Varlık Vergisi 1942-1944, İstanbul, “Belge Yayınları”, 2009, s. 215-216.

9 Mason W., Constantinople’s Last Hurrah: Turkey and the Ecumenical Patriarchate, World Policy Journal, . Vol. 18, N 2, (Sammer, 2001), p. 57.

տանգության երաշխավորը միաձուլումն է (homogeneity)¹⁰:

Թուրքիայի ոչ մուսուլման փոքրամասնությունների թեմային անդրադարձող բազմաթիվ գիտնականների աշխատանքներում հանդիպում ենք այն մտքին, որ հայերի, հույների և հրեաների դեմ կիրառված խտրական քաղաքականության ամենացայտուն օրինակները հետևյալ չորսն են. 1. Հունաստանի և Թուրքիայի միջև բնակչության փոխանակում (1923–1924 թթ.)¹¹, 2 «20 դասակարգի գորակոչ» (1941 թ.)¹², 3. «Ունեցվածքի հարկ» (1942 թ.)¹³, 4. 1955 թ. սեպտեմբերի 6–7–ի դեպքեր (պոգրոմ)¹⁴: Այս դասակարգման հետ կարելի է համաձայնվել մասամբ, քանի որ կան հալածանքի բազմաթիվ այլ լայնամասշտաբ կամ լոկալ օրինակներ, որոնք նույնպես հարկ է առանձնացնել: Փաստերի համադրմամբ կարող ենք ասել, որ ոչ թուրք փոքրամասնությունների դեմ հալածանքների պետական ծրագրի մասշտաբային օղակներից է 1964 թվականին ստամբուլաբնակ հույների արտաքսումը, որը թուրքական խտրական քաղաքականության ամենաքիչ արժարժված և ուսումնասիրված թեմաներից է: Մինչ օրս այս խնդրի վերաբերյալ կա ընդամենը մեկ ամբողջական աշխատություն. խոսքը ուսումնասիրողներ Հուլյա Դեմիրի և Ռոդվան Աքարի 1994 թ. Ստամբուլում հրատարակված գրքի մասին է:

Սակայն հիշյալ գիտնականները ևս բախվել են որոշակի դժվարությունների՝ կապված աղբյուրների սակավության և ուսումնասիրությունների բացակայության հետ: Հարկ է նկատել, որ թուրքական համապատասխան արխիվները մինչ օրս էլ շարունակում են փակ մնալ և Հ. Դեմիրի ու Ռ. Աքարի ուսումնասիրության կարևոր աղբյուրագիտական հիմքերից են ժամանակի մամուլը, ականատես վերապրողների հուշերը, ինչպես նաև որոշ պաշտոնյաների հետ արված հարցազրույցները: Բացի այդ գրքից՝ հետագայում հրատարակվել են որոշ հոդվածներ, որտեղ հպանցիկ անդրադարձ է արվում հույների արտաքսման խնդրին, կամ էլ բացահայտվում ու լուսաբանվում է այդ երևույթի մի որոշակի դրվագ, սակայն առավել ընդգրկուն, համապարփակ ուսումնասիրություններ առնվազն մեզ հայտնի չեն:

Խոսելով Թուրքիայի Հանրապետությունում հույների բնակչության, կարգավիճակի և թվաքանակի մասին՝ հարկ է առանձնացնել Լոզանի բանակցությունները, որոնց արդյունքում 1923 թ. հունվարի 30–ին Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «Բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագիր, համաձայն որի Թուրքիայի քաղաքացի հույն ուղղափառները և

10 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

11 Այդ մասին մանրամասն տե՛ս **Gökaçtı M.A.**, Nüfus Mübadelesi: Kayıp Bir Kuşağın Hikâyesi, İstanbul, “İletişim Yayınları”, 6. Baskı, 2010, 331 s..

12 Այդ մասին մանրամասն տե՛ս **Bali R.**, “Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplım, İstanbul, 1998, cilt 30, sayı 179, s. 4-18. Տե՛ս նաև **Մելքոնյան Ռ. Հ.**, Էթնիկ գորակոչ Թուրքիայի Հանրապետությունում (1941–1942 թթ.), «Լրաբեր հաս. գիտ.», ՀՀ ԳԱԱ, Եր., 2012, N 2–3, էջ 42–50:

13 Այդ մասին մանրամասն տե՛ս **Aktar A.**, Varlık Vergisi ve “Türkleştirme” Politikaları, İstanbul, “İletişim Yayınları”, 3. Baskı, 2000; Akar R., Aşkale Yolcuları (Varlık Vergisi ve Çalışma Kampları), İstanbul, “Mep Kitap”, 2006; **Մելքոնյան Ռ. Հ.**, «Ունեցվածքի հարկը» կամ մտտետության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հատ. 5, Եր., «Ատոդիկ» հրատարակչություն, 2008, էջ 127–143:

14 Այդ մասին մանրամասն տե՛ս **Güven D.**, Cumhuriyet Dönemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül 1955 Olayları, İstanbul, “İletişim Yayınları”, 3. Baskı, 2009; **Մելքոնյան Ռ. Հ.**, 1955 թվականի սեպտեմբերի 6–7–ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը), «Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու)», խմբագիր՝ **Գուրգեն Մելիքյան**, Եր., ԵՊՀ հրատ., 2013, հատ. 8, էջ 144–156:

Հունաստանի քաղաքացի թուրք մուսուլմանները պետք է փոխանակվեին¹⁵: Բացառության էր արվում միայն Կոստանդնուպոլսի բնակիչ հույների և Արևմտյան Թրակիայի բնակիչ մուսուլմանների համար, որոնք իրավունք ունեին մնալ¹⁶: Հունական կողմը պահանջում էր տեղահանության չենթարկել Ստամբուլում բնակվող բոլոր հույներին՝ նպատակ ունենալով այնտեղ պահպանել հունական ներկայությունը, իսկ քեմալականները ընդհակառակը, ցանկանում էին հնարավորինս քիչ ոչ մուսուլման ազգեր ունենալ իրենց սահմաններում և դրանով ևս մի քայլ անել դեպի միատարր Թուրքիայի տեսլականը: Այդ տարիներին քեմալական իշխանությունների նպատակներից է եղել Կոստանդնուպոլսի Հունաց տիեզերական պատրիարքության տեղափոխումը Թուրքիայից և անձամբ Մուսթաֆա Քեմալը և՛ իր հրապարակային ելույթներում, և՛ հարցազրույցներում բազմիցս ամենակոպիտ որակումներով է անդրադարձել Հունաց պատրիարքությանը և պատրիարքին: Լոզանի բանակցությունների ժամանակ թուրքական կողմի նախաձեռնությամբ քննարկվել է Հունաց պատրիարքությունը Ստամբուլից տեղափոխելու հարցը, սակայն Մեծ Բրիտանիայի ճնշման շնորհիվ հնարավոր է եղել հասնել նրան, որ պատրիարքությունը շարունակի մնալ Ստամբուլում՝ իհարկե ենթարկվելով բազմաթիվ սահմանափակումների¹⁷:

Լոզանի պայմանագրից հետո ընկած ժամանակաշրջանում Թուրքիայի և Հունաստանի միջև արվեցին հարաբերությունների բարելավմանն ուղղված մի քանի քայլեր և արդեն 1930 թ. հունիսի 10-ին Անկարայում Թուրքիայի նախագահ Մուսթաֆա Քեմալը և Հունաստանի վարչապետ Վենիզելոսը ստորագրեցին բնակության, առևտրի և ճանապարհորդելու վերաբերյալ մի համաձայնագիր, որը կոչված էր կարգավորելու 1923 թվականին իրականացված բնակչության փոխանակման հետևանքով առաջացած քաղաքական, տնտեսական և իրավական խնդիրները: Այս պայմանագրի 3-րդ կետով ճանաչվում էր երկու երկրների քաղաքացիների՝ Թուրքիայում հունահպատակների և Հունաստանում՝ թուրքահպատակների բնակության, առևտրով զբաղվելու, գույք ձեռք բերելու-վաճառելու իրավունքը¹⁸: Այդ ժամանակ Թուրքիայում, հիմնականում՝ Ստամբուլում, կային Հունաստանի քաղաքացի հանդիսացող հազարավոր մարդիկ, որոնց մեծ մասը ծնվել, մեծացել էր Թուրքիայում:

Սակայն այդ պայմանագիրը ամենևին էլ չէր նշանակում, որ Թուրքիան հրաժարվել է իր գլխավոր նպատակից՝ ստեղծել միատարր՝ թուրքական երկիր, որտեղ ոչ թուրք ժողովուրդները կամ պետք է չլինեին, կամ նրանց թիվը պետք է լիներ սինվոլիկ: Ասվածն ավելի ինստիտուցիոնալ տեսք է ստանում, երբ նկատի ենք ունենում 1947 թ. իշխող ՀԺԿ-ի 9-րդ բյուրոյի պատրաստած գաղտնի գեկույցը փոքրամասնությունների վերաբերյալ: Այդ փաստաթղթում հույների մասին նշվում էր, որ իշխանությունների նպատակն է մինչև Ստամբուլի գրավման 500-ամյակը, այն է՝ 1953 թ. Ստամբուլում ոչ մի հույն չըողնել, և դրա համար ներկայացված էին առաջարկ-

15 Sñu **Tosun R.**, Türk Yunan İlişkileri ve Türk-Rum Nüfus Mübadelesi, Konya, "Palet Yayınları", 2014, s. 5.

16 Sñu **Çetinoğlu S.**, İstanbul Doğumlu Rumların Kitlese Kovolması-1964 <http://anatoliblog.blogspot.com/2011/03/istanbul-dogumlu-rumların-kovolması.html> (մուտք՝ 22.01.2018)

17 Sñu **Ակցողլու Յ.**, Անիծված առյուծի բնացնումը, Եր., «Ճարտարագետ», 2007, էջ 113-114:

18 Sñu **Demir H., Akar R.**, İstanbul un Son Sürgünleri, İstanbul, "İletişim Yayınları", 2-inci Baskı, 1994, s. 43.

ներ¹⁹: Կարելի է վստահաբար պնդել, որ թուրքական իշխանությունները տարբեր տարիներին հետևողականորեն իրականացրել են հալածանքի մշակված քաղաքականություն հունական համայնքի նկատմամբ, որի նպատակն էր ստիպել հույներին հեռանալ Թուրքիայից և բացի այդ, տիրանալ նրանց ունեցվածքին: Եվ «20 դասակարգի գինակոչը», և «Ունեցվածքի հարկը» էականորեն ավելացրեցին վախի մթնոլորտը հունական համայնքում, սակայն 1955 թ. սեպտեմբերի 6–7–ի դեպքերը էլ ավելի հուժկու հարված եղան, որին հետևեց Թուրքիայի հույների արտագաղթի մեծ ալիքը:

Այնուամենայնիվ, տասնամյակներ տևած հալածանքներից հետո էլ 1960–ականներին Թուրքիայում հունական համայնքը դեռևս հաշվվում էր մի քանի տասնյակ հազար և թուրքական իշխանությունները Կիպրոսի հարցի հերթական սրացումը որպես պատրվակ կիրառելով՝ գործի դրեցին իրենց ծրագիրը, որի թիրախը դարձան հիմնականում ստամբուլաբնակ և Հունաստանի քաղաքացիություն ունեցող հույները:

2. Հույների արտաքսման նախապատրաստական փուլը. իրավական և անվտանգային «հիմնավորումները»

1963 թ. դեկտեմբերի 21–ից Կիպրոսում կրկին սկսվել էին զինված բախումներ, որոնք շարունակվեցին մինչև 1964–ի օգոստոս²⁰: Թուրքական քարոզչությունը հստակ մեխանիզմներով լարում էր իր երկրի հասարակությանը՝ բորբոքելով հակահունական տրամադրություններ. լուրեր էին տարածվում Կիպրոսում հույների կողմից թուրքերի «կոտորածների» մասին, մամուլում հրապարակվում էին լուսանկարներ: Այս ամենին որպես տրամաբանական շարունակություն հասարակությանը հիշեցվում էր, որ ստամբուլաբնակ հույները և Կիպրոսում «կոտորած» անողները նույն ազգից են: Ավելին, անմիջապես պաշտոնական քարոզչությունը ստամբուլաբնակ հույներին սկսեց ներկայացնել որպես Կիպրոսի նախագահ Մակարիոսի գործակալներ և հունական EOKA կազմակերպության աջակիցներ²¹: Հակահունական թշնամանքը անձնավորված դրսևորվում էր հատկապես Մակարիոս արքեպիսկոպոսի հանդեպ և դա այնքան էր խորացել, որ ինչպես նշում են Հ. Դեմիրը և Ռ. Աքարը, այդ ժամանակվա Թուրքիայում թուրք մայրերը իրենց երեխաներին վախեցնում էին սպառնալով կանչել Մակարիոսին կամ հանձնել նրան²²: Հակահունական հիստերիայի պայմաններում Ստամբուլի ավագանին հանդես եկավ առաջարկությամբ փոխելու Ստամբուլում հույն անունը պարունակող կամ հունական որևէ բան խորհրդանշող տեղանունները²³: Նույն ավագանու որոշմամբ՝ հենց 1964–ին Ստամբուլի Գալաթա թաղամասը անվանափոխվեց Քարաքյոյի, Սամաթիան՝ Քոջամուլթաֆա փաշայի և այլն²⁴:

19 Տե՛ս **Akar R.**, *Aşkale Yolcuları (Varlık Vergisi ve Çalışma Kampları)*, İstanbul, “Mep Kitap”, 2006, s. 191.

20 Տե՛ս **Demir H.**, **Akar R.**, նշված աշխ., էջ 18.

21 Տե՛ս նույն տեղում, էջ 27:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 30:

23 Թուրքիայում տեղանունների թուրքացման մասին մանրամասն տես **Սահակյան Լ.Ս.**, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ, «Արոդ», 2010; **Nişanyan S.**, *Hayali Coğrafyalar: Cumhuriyet Döneminde Türkiye de Değiştirilen Yeradları*, İstanbul, “TESEV Yayınları”, 2011; **Մելքոնյան Ռ.Հ.**, Տեղանունների փոփոխությունը՝ որպես թուրքացման քաղաքականության բաղադրիչ, 21-րդ դար, եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2009, N 6, էջ 30–37:

24 Տե՛ս **Demir H.**, **Akar R.**, նշված աշխ., էջ 31.

Հակահունական տրամադրություններ բորբոքելու և իրենց քայլերի իբրև թե օրինականությունը ապահովելու համար թուրքական իշխանությունները օգտագործում էին նաև խորհրդարանական հարթակը: Այսպես, շատ հաճախ իշխանամետ պատգամավորների «անմեղ» հարցերին ի պատասխան կառավարությունը հանդես էր գալիս որևէ կոշտ հայտարարությամբ կամ քայլեր ձեռնարկում²⁵: Օրինակ՝ 1964 թ. փետրվարի 14-ին Մանիսայի պատգամավոր Հյուրբեմ Քուբաթը Ազգային ժողովում կառավարության առջև հարց է բարձրացնում և պահանջում որպեսզի դրանց պատասխանի վարչապետ Իսմեթ Իսյոնյուն: Պատգամավորին հետաքրքրում էր, թե որքան է Թուրքիայում բնակվող և աշխատող հույների թիվը, որոնք ունեն Հունաստանի քաղաքացիություն, արդյոք նրանք վճարում են եկամտահարկ և եթե ոչ, ապա հարկից խուսափածների նկատմամբ որևէ քայլ արվել է թե ոչ²⁶: Այդ շրջանում նմանատիպ սադրիչ ենթատեքստ պարունակող հացաղբումներ շատ էին հնչում խորհրդարանում, ինչն ակնհայտորեն ուներ կազմակերպված բնույթ: Հակահունական հիստերիայի մյուս գործիքները մամուլն էր և իշխանամետ ու ազգայնամոլական երիտասարդական/ուսանողական կառույցները, որոնք նախկինում էլ արդեն քանիցս օգտագործվել էին²⁷: Նրանք ոչ միայն բողոքի ցույցեր էին անում՝ ռասիստական բնույթի լրզուներգներով, այլև կազմակերպում էին հունական ապրանքները բոյկոտելու և հույներին պատկանող խանութներից առևտուր չանելու ակցիաներ²⁸: Ոչ թուրք փոքրամասնությունների հանդեպ կիրառվող պետական քաղաքականության ավանդական մեթոդներից էր այն, որ ստիպում էին դիցուք՝ ստամբուլաբնակ մի խումբ հույների հանդես գալ Կիպրոսում իրենց ազգակիցների գործողությունների կոշտ քննադատությամբ, մամուլում հրապարակել համապատասխան հայտարարություններ, կազմակերպել այդ ամենը դատապարտող ստորագրահավաքներ և այլն²⁹:

Այս ամենի գագաթնակետը դարձավ 1964 թ. մարտի 16-ը³⁰, երբ Թուրքիայի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ միակողմանի կերպով չեղյալ է ճանաչում 1930 թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված պայմանագիրը, որը վերաբերում էր Ստամբուլում հունահպատակ հույների բնակության և այլ իրավունքներին: Իսկ պայմանագրի չեղյալ ճանաչելը Թուրքիայի իշխանություններին տալիս էր իրավական հիմք Ստամբուլում բնակվող Հունաստանի քաղաքացի հույների արտաքսման համար: Կառավարությունը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որ պայմանագրի չեղյալ ճանաչումից 6 ամիս անց Թուրքիայում բնակվող Հունաստանի քաղաքացի հույների վիզաները չեն երկարաձգվելու, և նրանք

25 Տե՛ս նույն տեղում, էջ 33:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

27 Օրինակ՝ 1928 թ. ոչ թուրք փոքրամասնությունների մայրենի լեզուների դեմ պետական հալածանքի քաղաքականության կիրառման ժամանակ: Այդ մասին տե՛ս **Մելքոնյան Ռ.Ը.**, Թուրքական լեզվաքաղաքականության ազգայնամոլական ուղղվածության շուրջ, «Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու)», խմբագիր՝ **Գուրգեն Մելիքյան**, Եր., ԵՊՀ հրատ., 2016, հատ.11, էջ 110-118:

28 Տե՛ս **Новейшая история Турции**, Москва, издательство «Наука», 1968, с. 324.

29 Տե՛ս **Demir H., Akar R.**, նշված աշխ., էջ 29.

30 Ըստ Սայիթ Զեթինօղլուի այս ամսաթվի ընտրությունը ևս պատահական չէր. մարտի 16-ը տխրահռչակ «Ունեցվածքի հարկի» չեղարկման ամսաթիվն էր. «Չափազանցրած չենք լինի եթե ասենք, որ էթնիկ գտման մասնագետ Իսմեթ Իսյոնյուն շարունակեց իր կանգ առած կետից», տե՛ս **Çetinoğlu S.**, İstanbul Doğumlu Rumların Kitesel Kovulması-1964 <http://anatoliliblog.blogspot.com/2011/03/istanbul-dogumlu-rumların-kovulması.html> (մուտք՝ 22.01.2018)

ստիպված են լինելու լքել Թուրքիան³¹: Այս հայտարարությամբ թուրքական կառավարությունը իբրև թե պահպանում էր 1930 թ. պայմանագրի 36-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն պայմանագրի չեղյալ ճանաչելու դեպքում կողմերը պետք է առնվազն 6 ամիս առաջ հայտարարեն այդ մասին: Սակայն ըստ Հ. Դեմիրի և Ռ. Աքարի՝ այս 6 ամիս ժամանակի տրամադրումը պայմանավորված էր նրանով, որ թուրքական իշխանությունները սպասում էին հունական կողմից որոշակի զիջումների³²: Բացի այդ՝ թուրքական կառավարությունը, միակողմանի կերպով չեղարկելով 1930 թ. թուրք-հունական պայմանագիրը, հղում էր արել այդ նույն պայմանագրի 16-րդ հոդվածին, որի համաձայն՝ պայմանագիրը հնարավոր է չեղյալ հայտարարել, եթե ծագել են այնպիսի պատճառներ, որոնք կապված են երկրներից մեկի անվտանգության և պաշտպանության հետ³³ և այդ պարագայում արտաքսման համար հատկացվող 6 ամսվա ժամկետը կարող է և չպահպանվել³⁴:

1964 թ. ապրիլի 7-ին Թուրքիայի վարչապետը հանդես է գալիս ևս մեկ հայտարարությամբ, որում ասվում էր, թե կառավարությունը որոշում է ընդունել ժամանակավորապես շրջանառությունից հանել 1955 թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված վիզաներին վերաբերող պայմանագիրը³⁵: Սակայն այս որոշման համար ընտրված ժամանակը նույնպես պատահական չէր. խնդիրն այն էր, որ Ջատկի տոների հետ կապված բազմաթիվ թուրքահպատակ հույներ այցելել էին Հունաստան և փաստորեն այլևս չէին կարողանալու ստանալ վիզա Թուրքիա վերադառնալու համար³⁶: Սա, ըստ էության, 1964 թվականին հույների առաջին զանգվածային արտաքսման փուլն էր, որի ժամանակ խախտվեց մարդկանց կրոնական զգացմունքների, կրոնական տոների հանդեպ ցուցաբերվող հարգանքը:

Բացի վերոհիշյալ «իրավական» հիմնավորումից, թուրքական իշխանությունները ստամբուլաբնակ հույներին արտաքսելու համար սկսեցին փնտրել այլ պատրվակ ևս, որն ավելի հավաստի կդարձներ առաջ քաշված այն վարկածը, թե հույները «սպառնալիք են երկրի անվտանգությանը»: Դրա համար առանձնացվեցին այդ պահին Թուրքիայում գրանցված հունական 82 հասարակական կազմակերպություններ, իսկ Ստամբուլի անվտանգության ծառայությունը հանձնարարություն ուներ դրանցից մեկը ներկայացնել որպես «Թուրքիայի դեմ պայքարող» գաղտնի կամ ահաբեկչական կառույց: Այնուհետև արտաքսման ենթակա հույն քաղաքացիներից շատերը պետք է ներկայացվեին որպես այդ կազմակերպության անդամներ, ինչից հետո նրանց հանդեպ կկիրառվեին համապատասխան քայլեր: 82 հունական հասարակական կազմակերպություններից թուրքական համապատասխան կառույցներն ընտրում են 1930 թ. ստեղծված «Էլենիկի Էնոսիս» միությունը, որի կանոնադրության մեջ նշված նպատակներից էր հունական համայնքի մշակույթի խթանումը: Ահա հենց այս կառույցն էլ հայտարարվում է գաղտնի գործունեություն վարող, Թուրքիայի անվտանգությանը սպառ-

31 Տե՛ս **Demir H., Akar R.**, նշված աշխ., էջ 40.

32 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

33 Տե՛ս *Новейшая история Турции*, Москва, издательство «Наука», 1968, с. 324.

34 **Demir H., Akar R.**, նշված աշխ., էջ 64.

35 Տե՛ս նույն տեղում, էջ 78:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 78:

նացող և սկսվում է դրա անդամների արտաքսումը: Սակայն այս ամենը մի կողմից ծիծաղելի վիճակում էր դնում թուրքական իշխանություններին, իսկ մյուս կողմից ցույց էր տալիս նրանց քայլերի ու գործողությունների անտրամաբանական բնույթը: Այսպես, «Էլենիկի Էնոսիս» միության անդամների մեծ մասը տարեց մարդիկ էին. նրանցից 121-ը 70-ն անց էր, իսկ 20-ը՝ 80-ն անց³⁷, իսկ մի մասն էլ արդեն մահացել էին, սակայն միևնույնն է, թուրքական իշխանությունները բոլորին հռչակեցին «սհաբեկիչներ», «հատուկ գործակալներ», որոնք ենթակա են անհապաղ արտաքսման:

1964 թ. ապրիլի 17-ին կառավարությունը և մասնավորապես ֆինանսների նախարարությունը Թուրքիայի տարածքում գործող բոլոր բանկերից պահանջում է Հունաստանի քաղաքացի հույների հաշիվների վերաբերյալ տվյալներ: Իսկ արդեն մայիսի 7-ին պաշտոնապես հայտարարվում է, որ բոլոր հույների հաշիվները սառեցվել են³⁸: Շուտով հրապարակվում է ստամբուլաբնակ, սակայն հունահպատակ այն անձանց ցուցակը, որոնք ենթակա էին արտաքսման: Այդ հույներին նախ ուղարկվում էր ծանուցում, որից հետո նրանք պարտավոր էին ներկայանալ անվտանգության ծառայության հույների հարցերով զբաղվող բաժին: Այնտեղ նրանց ներկայացվում էր արդեն պատրաստված մի հայտարարագիր, որը պարտավոր էին ստորագրել: Այդ փաստաթղթում նշված էր, որ ստորագրող հույնը «խտտովանում է», որ «1. ընդունում է, որ խախտել է Թուրքիայի օրենքները, 2. անդամակցում է «Էլենիկի Էնոսիս» կազմակերպությանը, որը մեղադրվում է Թուրքիայի դեմ գործունեություն ծավալելու մեջ, 3. գումար է ուղարկել Կիպրոսի հույն «սհաբեկիչներին», 4. իր կամքով է հեռանում Թուրքիայից»³⁹: Նրանք, ովքեր հրաժարվում էին ստորագրել այդ փաստաթուղթը ենթարկվում էին ֆիզիկական բռնությունների անվտանգության ծառայության նկուղային հարկում գտնվող խցերում⁴⁰: Այդ դեպքերի մասին տվյալների ենք հանդիպում նաև Թուրքիայում հայտնի հայազգի հասարակական-քաղաքական գործիչ Սարգիս Չերքեզյանի հուշերում. «Ինչքան ես գիտեմ 1964-ին հույներին Հունաստան արտաքսելու ժամանակ ջարդելությանն էլու, սպանելու դեպքեր չեն եղել, սակայն բոլորին կանչում էին անվտանգության մարմիններ և ստորագրություն վերցնում առ այն, որ «Ես իմ կամքով եմ հեռանում»»⁴¹:

Հարկ է հատուկ շեշտել, որ արտաքսման ենթակա անձին տրվում էր մեկ կամ առավելագույնը երկու օր պատրաստվելու և Թուրքիայից հեռանալու համար⁴²: Այդ ընթացքում տվյալ անձը պետք է հասցներ հավաքել իրերը, կարգավորել գործերը, հրաժեշտ տալ ազգականներին և այլն: 1964 թ. արտաքսված Նեոկլիս Սարրիսը պատմում է, որ այնքան խիստ է եղել նշված կարճ ժամկետում Թուրքիան լքելու պարտադրանքը, որ հույներին անգամ թույլ չի տրվել կազմակերպել կամ մասնակցել ազգականների հուղարկավորությանը⁴³:

37 Տես նույն տեղում, էջ 75-76:

38 Տես նույն տեղում, էջ 88:

39 Նույն տեղում, էջ 76:

40 Տես նույն տեղում, էջ 111:

41 Çerkezyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, “Belge Yayınları”, 2003, s. 195.

42 Տես Demir H., Akar R., նշված աշխ., էջ 111.

43 Տես նույն տեղում, էջ 183:

Թուրքական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձրել նաև այն հարցին, թե արտաքսվողները իրենց հետ ինչքան գույք և գումար կարող էին վերցնել: Մրա վերաբերյալ ընդունվել էր որոշակի սահմանափակումներ ենթադրող որոշում, որը մի կողմից՝ հատակ ցույց էր տալիս տվյալ քայլի անտրամաբանական և հակաիրավական բնույթը, իսկ մյուս կողմից՝ ի ցույց դնում պետական մակարդակով հույների գույքը և ունեցվածքը թալանելու ձգտումը: Այսպես, ըստ կառավարության ընդունած որոշման, Թուրքիայից արտաքսվող հույները իրավունք ունեին իրենց հետ վերցնելու 20 կիլոգրամը չգերազանցող ճամպրուկ՝ անձնական իրերով և 200 թուրքական լիրա գումար, որն այդ ժամանակ հավասարագոր էր 22 ԱՄՆ դոլարի⁴⁴: Նրանց մնացած ամբողջ շարժական գույքը, անձնական իրերը արգելվում էր հանել Թուրքիայի սահմաններից դուրս⁴⁵:

3. «Կամավոր»-պարտադիր արտաքսում

1964 թվականին Ստամբուլում բնակվել է հունական քաղաքացիություն ունեցող մոտ 12 500 մարդ (առավել ստույգ՝ 12 592), որոնք պարտադիր ենթակա էին արտաքսման: Այս 12 500-ի արտաքսումը, սակայն, ենթադրում էր ավելի լայն ծավալների ընդգրկում, քանի որ նրանք ամուսնական և ընտանեկան կապերով կապված էին Թուրքիայի քաղաքացի հույների հետ և նրանց արտաքսումը ինքնաբերաբար ենթադրում էր նաև մյուսների «կամավոր հեռացում»: Այսինքն՝ կային բազմաթիվ ընտանիքներ, որտեղ օրինակ կինը Հունաստանի քաղաքացի էր, իսկ ամուսինը՝ Թուրքիայի և արտաքսման հրամանից հետո ստիպված արտագաղթելու էր ամբողջ ընտանիքը: Փաստացի ստեղծվում էր մի վիճակ, որ Թուրքիայի քաղաքացի հույները, որոնք ընտանեկան կապերով կապված էին Հունաստանի քաղաքացի հույների հետ «կամավոր»⁴⁶ արտագաղթում էին, ուստիև քաղաքացիության հարցը դարձավ կարևոր ու բախտորոշ բազմաթիվ հունական ընտանիքների համար: Ըստ տարբեր աղբյուրների՝ արտաքսման ենթակա հույների հետ ընտանեկան կապերով (ամուսին, երեխա, ծնող) կապված հույների թիվը գերազանցում էր 40 000-ը և թուրքական իշխանությունները նախաձեռնելով այս ամենը իհարկե գիտեին, որը խնդիրը չէր վերաբերելու միայն 12 500 հույներին, այլ դա լինելու էր ավելի լայնամասշտաբ արտագաղթ:

Պետական և հասարակական հալածանքի մթնոլորտը, ինչպես նաև իրենց հազարամյա բնօրրանից արագ արտաքսվելու հանկարծակի որոշումը ստիպել էր, որ արտաքսման ենթակա հույները որոշ ծայրահեղ և պարտադրված քայլերի գնան: Օրինակ՝ 1964 թ. ապրիլին 86 հույն ուղղափառ հրապարակավ դիմել են համապատասխան կառույցներին՝ խնդրելով իրենց գրանցել որպես ուղղափառ թուրքեր⁴⁷. այդ նույն շրջանում արձանագրվել են հույների «կամավոր» իսլամ ընդունելու⁴⁸ կամ ինքնությունը

44 Տե՛ս նույն տեղում, էջ 72:

45 Տե՛ս **Hür A.**, 6-7 Eylül 1955 yağması ve 1964 sürgünleri, “Radikal”, 06. 09. 2015.

46 **Demir H., Akar R.**, նշված աշխ., էջ 90.

47 Տե՛ս նույն տեղում, էջ 82:

48 Այս համատեքստում նշենք, որ հենց նույն ժամանակ և կրկին նույն հալածանքի մթնոլորտի հետևանքով Բաթմանում 88 բնակիչ ունեցող հայկական մի գյուղի բոլոր բնակիչները փոխել են կրոնը՝ ընդունելով

թաքցնելու բազմաթիվ դեպքեր⁴⁹: Թեև այս ամենը արվում էր արտաքսվելուց խուսափելու համար, սակայն այդ քայլերը մեծ մասամբ արդյունք չէին տալիս:

Ինչևէ, արդեն ապրիլ ամսից սկսեցին հույների առաջին արտաքսումները և չնայած որ նրանց համար Թուրքիան լքելու վերջին ժամկետ սահմանվել էր 1964 թ. սեպտեմբերի 16-ը, այսինքն՝ այն օրը, երբ լրանում էր 1930 թ. պայմանագրի չեղյալ հայտարարելու 6 ամիսը, սակայն այդ ժամկետը չպահպանվեց: Հույների ամենագանգվածային արտաքսումը և «կանովին» հեռացումը տեղի ունեցան հունիս-հուլիս ամիսներին⁵⁰: Այդ գործընթացը գտնվում էր թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում և հիմնականում լուսաբանվում էր պետական-պաշտոնական թեզի շրջանակներում. այսինքն՝ արտաքսվում էին «պետությանը վտանգ սպառնացողները», «լրտեսները» և այլն: Այդ ոճի հրապարակումները և լրատվությունը ուղեկցվում էր տարատեսակ լուսանկարներով, որոնք միտված էին էլ ավելի հիմնավոր դարձնել արտաքսումների պաշտոնական վարկածը, սակայն հենց միայն լուսանկարները պարզորոշ ի ցույց էին դնում այդ ամենի շինծու լինելը: Օրինակ՝ «Յենի Սաբահ» թերթի 1964 թ. հունիսի 24-ի համարում ամբողջ էջի վրա մի փոքրիկ լուր է՝ վերնագրված «Հույն լրտեսը այս առավոտ արտաքսվում է», իսկ շուրջը լուսանկարներ են, որտեղ պատկերված են տարեց ու մի կերպ քայլող հույներ, որոնց ուղեկցում են դեպի ինքնաթիռ կամ գնացք⁵¹: Ստամբուլաբնակ անխտիր բոլոր հունահպատակները ենթակա էին պարտադիր արտաքսման անկախ նրանց տարիքից, առողջական վիճակից և այլն. արտաքսվում էին տարեցները, անգամ անկողնային հիվանդները, հաշմանդամները: Օրինակ՝ Սարգիս Չերքեզյանը իր հուշերում գրում է. «Պատգարակով մի կին էին տանում, քայլելու ուժ չունեցող, սակայն նա էլ համարվում էր «պոտենցիալ» թշնամի»⁵²:

Հույն լրագրող Վասիլիադիս Միհալիսի փոխանցած տվյալները մեկ այլ դիտանկյունից են ապացուցում 1964 թ. արտաքսման ցեղասպանական բնույթը և որոշակի զուգահեռները Հայոց ցեղասպանության հետ: Այսպես, ըստ Միհալիսի՝ ամենաառաջինը արտաքսման էին ենթարկվում հույն մտավորականները, լրագրողները և գործարարները⁵³. այսինքն՝ ըստ էության, կրկին կիրառվում էր համայնքը գլխատելու նախօրոք մշակված ցեղասպանական քաղաքականությունը: Դեպքերի ականատես-վերապրող Նեոկլիս Սարրիսը պատմում է նաև մի ոստիկանի մասին, որը ծագումով հույն է եղել, սակայն ընդունել է իսլամ, փոխել անունը դառնալով Բեհչեթ և հենց նա է ակտիվորեն զբաղվել արտաքսման ենթակա հույների արձանագրմամբ և վտարմամբ⁵⁴: Ինչպես հայտնի է, որոշ թվով հայագգի մատնիչներ եղել են նաև Հայոց ցեղասպանության տարիներին և նրանք էին, որ նպաստում էին արքայի ենթակա հայ մտավորականների ու հասարակական-քա-

իսլամ, տե՛ս Hofmann T., Armenians in Turkey today, Uppsala, (second edition), The Union of Armenian Associations in Sweden, 2003, p. 18.

49 Տե՛ս Demir H., Akar R., նշված աշխ., էջ 101.

50 Տե՛ս նույն տեղում, էջ 95:

51 Տե՛ս Yunan casusu bu sabah suruluyor, "Yeni Sabah", 24, 06, 1964.

52 Çerkezyan S., նշված աշխ., էջ 195.

53 Demir H., Akar R., նշված աշխ., էջ 187.

54 Տե՛ս նույն տեղում, էջ 182:

ղաքական գործիչների ցուցակների պատրաստմանը:

Բացի քաղաքական և տնտեսական հետևանքներից՝ 1964 թ. արտաքսումը, բնականաբար, ունեցել է նաև անձնական, հոգեբանական ծանր հետևանքներ: Արտաքսված հույներից տիկին Հարուլա Բ.-ն, որը, ի դեպ, արտաքսումից 29 տարի անց էլ խուսափում էր հարցազրույցի ժամանակ հայտնել իր լրիվ անունը, պատմում էր, որ Հունաստան արտաքսված հույների շրջանում արձանագրվել են ինքնասպանության բազմաթիվ դեպքեր⁵⁵, իսկ շատերը լրջագույն հոգեկան խնդիրներ են ձեռք բերել: Ինքնասպանության և հոգեկան խանգարում ստանալու դեպքեր արձանագրվել են նաև Թուրքիայում այն մարդկանց շրջանում, որոնց տեղեկացվել է, որ իրենք պետք է 1-2 օրվա ընթացքում լքեն իրենց բնօրրանը:

Կարևոր է նաև արտաքսված հույների անշարժ գույքի և բանկային հաշիվների հարցը. ըստ տարբեր տվյալների՝ հույների միայն անշարժ գույքի գինը կազմում էր 200-ից 500 միլիոն դոլար⁵⁶: Թուրքական կառավարությունը 1964 թ. նոյեմբերի 2-ին ընդունում է 6/3801 որոշումը, որը վերաբերում էր հունահայատակ հույների անշարժ գույքին և բանկային հաշիվներին: Ըստ այդ որոշման՝ անշարժ գույքը և բանկում պահվող գումարները կվերադարձվեն հույներին «եթե նրանք վերադառնան»⁵⁷: Սառեցվել է նաև հույներին պատկանող անշարժ գույքի վկայականների կիրառելիությունը և փաստորեն այդ գույքը ժամանակավորապես պետականացվել է: Բնականաբար դրանք օգտագործվել են (տրվել են վարձակալության, ժամանակավոր շահագործման) պետության կողմից և ստացված եկամուտը տրվել է ոչ թե օրինական տերերին, այլ յուրացվել է պետության և տարբեր պետական պաշտոնյաների կողմից: Այս փաստը ևս անզեն աչքով հիշեցնում է Հայոց ցեղասպանության ժամանակ օսմանյան կառավարության կողմից ընդունված և հետագայում քեմալականների կողմից վերընդունված ու կիրառված հայկական լքյալ գույքի թալանը «կարգավորող» «Լքյալ գույքի մասին» օրենքը, որով մի կողմից՝ հայերին արգելվում էր վերադառնալ Թուրքիա, իսկ մյուս կողմից՝ հռչակվում, որ եթե վերադառնան, ապա գույքը կարող են ետ ստանալ:

Նկատենք նաև, որ Հունաստանը ամեն հնարավոր առիթի դեպքում հույների գույքի հարցը բարձրացնում էր միջազգային հարթակներում և ի վերջո 1988 թ. Դավոսի գագաթաժողովի ժամանակ Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը ստիպված է լինում խոստանալ ետ վերադարձնել 1964 թ. արտաքսված հույների գույքը և 1988 թ. փետրվարի 3-ին Թուրքիայի կառավարությունը ընդունում է թիվ 12592 որոշումը, որով կիրառությունից հանվում էր 1964 թ. համապատասխան որոշումը և սկսվում արտաքսված հույների զավթված գույքի վերադարձի գործընթացը⁵⁸: Այդ ընթացքում ի հայտ էր եկել հետևյալ պատկերը. 1964 թվականին Հունաստանի քաղաքացի հույներից թուրքական պետությունը բռնագրավել էր 2902 անշարժ գույք, որից 2411-ը Ստամբուլում, 284-ը Իզմիրում, 102-ը Ադրնում, ինչպես նաև Էդիրնեում (2), Թեբրիդաղում (23), Իջելում (32), Հաթայում (46), Ադա-

55 Տե՛ս նույն տեղում, էջ 177:

56 Տե՛ս նույն տեղում, էջ 116-117:

57 Նույն տեղում, էջ 117-118:

58 Տե՛ս նույն տեղում, էջ 164-165:

նայում (2)⁵⁹: Ավելորդ չէ նկատել նաև, որ 1980-ականների վերջին Թուրքիայի հասարակական-քաղաքական դաշտում այդ որոշումը միանշանակ չի ընդունվել և Թ. Օզալն ու թուրքական կառավարությունը հաճախ ենթարկվել են քննադատության՝ ազգայնամոլական շեշտադրումներով: Այսինքն՝ ըստ էության, թուրքական հասարակության գերակշիռ մեծամասնությունը բնական է համարել հունական գույքի թալանը և տասնամյակներ անց դրանց մի մասի վերադարձը համարել է պարտվողական, անգամ դավաճանական քայլ:

1964 թ. հույների արտաքսման խնդիրը բացի քաղաքական, տնտեսական ասպեկտներից ունի կարևոր մեկ այլ բաղադրիչ ևս. խոսքը պետական ավանդույթի և գործելակերպի մասին է: Փաստացի Թուրքիա պետությունը իր երկրի տարածքում ապրող կոնկրետ ազգերին դիտարկում է որպես պատանդ և միջազգային հարաբերություններում առևտրի առարկա⁶⁰: Ավաճի ամենացայտուն ապացույցներն առկա են թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում: Օրինակ՝ Թուրքիայի նախագահ Ջեմալ Գյուրսելը 1964 թ. ապրիլի 7-ին հայտարարում էր. «Թուրքիայի հույն փոքրամասնության վիճակը սերտորեն կապված է Կիպրոսի խնդրի և թուրք-հունական հարաբերությունների հետ»⁶¹: Ավելորդ չէ նկատել նաև, որ 1964 թ. հույների արտաքսման շրջանում թուրքական մամուլում կրկին սկսել էր արձարծովել Հունաց տիեզերական պատրիարքության Ստամբուլից տեղափոխելու հարցը, որը թուրքական իշխանությունների և կոնկրետ վարչապետ Իսմեթ Իսյոնյուի համար կարևոր ու սկզբունքային էր և, ինչ որ առումով, Լոզանի բանակցությունների ժամանակ կիսատ թողած գործի շարունակության իմաստ ուներ: Եվ բնական էր նաև, որ իշխանությունների հռետորաբանության մեջ պատրիարքությունն ու անձամբ պատրիարքը հստակ առանձնացվում և թիրախավորվում էին: Վարչապետ Իսմեթ Իսյոնյուն իր օրագրում 1964 թ. ապրիլի 8-ին գոհունակությամբ նշել է, որ նախագահ Գյուրսելը հրապարակավ քննադատել է Կոստանդնուպոլսի Հունաց պատրիարքին և նշել. «Պատրիարքությունը (Հունաց - Ռ.Մ.) իր ստեղծման օրվանից հակաիրավական դաշտում է և երբեք էլ զուտ կրոնական գործառույթներով չի զբաղվել»⁶²:

Պետք է շեշտել, որ թուրքական իշխանությունների վերոնշյալ ավանդական գործելաոճը դրսևորվում է ամեն անգամ, երբ ի հայտ են գալիս խնդիրներ արտաքին ճակատում: Այս նույն մտածողությունը շարունակվում է նաև մեր օրերում՝ կապված, օրինակ, Թուրքիայում բնակվող հայաստանցի անօրինական միգրանտների հետ և նախագահ Էրդողանը հայ-թուրքական հարաբերությունների լարման ժամանակ բազմիցս սպառնացել է արտաքսել այդ հայերին: Թուրքիայի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ հայերի հետ կապված նմանատիպ հայտարարություններով հանդես են եկել նաև ավելի վաղ:

Ինչպես նշվեց, 1964 թ. հույների արտաքսման մասին սակավաթիվ փաստերի, տեղեկատվության առկայության պարագայում էլ ավելի կարևոր և

59 Տե՛ս նույն տեղում, էջ 89:

60 Տե՛ս նույն տեղում, էջ 14:

61 Նույն տեղում, էջ 138:

62 **İsmet İnönü**, Defterler (1919-1973), 2. Cilt (Hazırlayan Ahmet Demirel), İstanbul, “Yapı Kredi Yayınları”, 3. baskı, 2008, s. 945.

ուշագրավ են դառնում ժամանակի թուրք պաշտոնյաների, քաղաքական գործիչների տարիներ հետո տված հարցազրույցները կամ արտահայտած մտքերը, որոնք բացահայտում են այլատյաց քաղաքականության տարբեր ենթաշերտեր: Այսպես, հույների արտաքսման մասին հետագայում հարցազրույց է տվել 1964-ին Թուրքիայի աշխատանքի նախարար, իսկ հետագայում մի քանի անգամ վարչապետ դարձած Բյուլենթ Էջևիթը: Հ. Դեմիրի և Ռ. Աքարի գրքում տեղ գտած հարցազրույցում Բ. Էջևիթը նախ խոսում է թուրքական պետության, այսպես կոչված, հանդուրժողականության և հատկապես այլ էթնիկ խմբերի նկատմամբ բարյացկամ վերաբերմունքի մասին՝ ինչպես օսմանյան, այնպես էլ հանրապետական շրջաններում: Իրականության հետ ընդհանրապես կապ չունեցող այդ հայտարարությունից հետո Բ. Էջևիթը նկատում է, որ երբեմն թուրքական պետությունը որոշ հարցերում «փոքր ինչ սխալ է հակազդեցություն ցույց տալիս»⁶³: Խոսելով 1964-ին հույների արտաքսման մասին՝ նախկին վարչապետը բառացիորեն հայտարարում է. «Ստամբուլաբնակ հույներին Թուրքիայից արտաքսելու որոշումը, իմ կարծիքով, շատ մեծ սխալ էր»⁶⁴: Սակայն անմիջապես շտապում է նշել, որ դրա պատճառը Կիպրոսի հույների կողմից թուրքերի նկատմամբ «ցեղասպանություն նախաձեռնելն էր»⁶⁵: Հակասական այդ հարցազրույցում Բ. Էջևիթը, այնուամենայնիվ, խոստովանում է, որ «ստամբուլաբնակ հույները որևէ մեղք չունեին այն ամենի հետ, ինչը տեղի էր ունենում Կիպրոսում»⁶⁶:

Այստեղ չենք կարող չընդգծել, որ հենց նույն Բ. Էջևիթն էլ, 1974 թ. լինելով վարչապետ, նախաձեռնեց Թուրքիայի ներխուժումը Կիպրոս և կղզու մի մասի օկուպացիան, որը շարունակվում է մինչ օրս: Իր այդ քայլի համար Բ. Էջևիթին թուրքական հասարակությունը տվել էր «Կիպրոսի նվաճող» անունը: Սակայն խոսելով հույների արտաքսման սխալ լինելու մասին՝ «Կիպրոսի նվաճողը» չի կարողանում թաքցնել իր այլատյաց և զավթողական մոտեցումները անկեղծորեն նշելով. «Քանի որ 1964-ին Թուրքիան ի վիճակի չէր Կիպրոսում զինված միջամտություն իրականացնել, ուստի նման սխալ արձագաք տվեց»⁶⁷:... «Թուրքիան այն ժամանակ չկարողանալով փրկել թուրքերին Կիպրոսում դրա վրեժը լուծեց ստամբուլաբնակ հույներից»⁶⁸: Այսինքն՝ Բ. Էջևիթը, մակերեսորեն քննադատելով 1964-ի որոշումը և արտաքսումը սխալ համարելով, ուղղակիորեն շեշտում է, որ դրա փոխարեն պետք էր «զինված միջամտություն անել Կիպրոսում», ուստի սխալ էր ոչ թե հակահունական ատելությունը, այլ դրա գործադրման համար 1964-ին ընտրված կոնկրետ մեխանիզմը:

Հույների 1964 թվականի արտաքսման խնդրին է անդրադարձել 1991-1995 թթ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Հյուսամեթթին Ջինդորուքը, որը, լինելով քաղաքական և գաղափարախոսական հակառակ բևեռի ներկայացուցիչ, քննադատել է ընդհանրապես Իսմեթ Ինյոնյուի քա-

63 Demir H., Akar R., նշված աշխ., էջ 201.

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

66 Նույն տեղում, էջ 202:

67 Նույն տեղում, էջ 201-202:

68 Նույն տեղում, էջ 203:

ղաքական գործունեությունը: Իսկ խոսելով Ի. Ինյոնյուի 1960-ականների առաջին կեսին որպես վարչապետ գործունեության մասին՝ նշել է. «1964 թ. կառավարության որոշմամբ 50 հազարից ավելի ստամբուլաբնակ հույներ բռնագաղթի ենթարկվեցին և նրանք զրկվեցին իրենց անշարժ գույքի վրա ունեցած իրավունքներից»⁶⁹: Ջարգացնելով նույն թեման՝ ԹԱՄԺ նախկին նախագահը նկատում է, որ Ի. Ինյոնյուն 1964 թ. արել է այն, ինչը լիովին չի կարողացել լուծել Լոզանի պայմանագրի ժամանակ: Անդրադառնալով այդ ամենի հետևանքներին՝ Հ. Ջինդորուքը նկատում է, որ բռնագաղթը հանգեցրեց նրան, որ. «Հունական դպրոցները և եկեղեցիները մնացին առանց համայնքի և աշակերտների»⁷⁰: Այստեղ խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ հերթական անգամ ականատեսն ենք լինում նրան, թե ինչպես են թուրքական տարբեր տարիների իշխանությունները, տարբեր գաղափարախոսության կրող քաղաքական գործիչները միմյանց մեղադրում ռասիզմի, խտրական քաղաքականության, կրոնական և էթնիկ այլաոյացության մեջ:

Եզրակացություններ

Ըստ ուսումնասիրող Սայիթ Չեթինօղլուի իրավացի դիտարկման՝ 1964 թ. հույների արտաքսումը Թուրքիայի Հանրապետությունում հետևողական կերպով իրականացված էթնիկ զտման կարևոր փուլերից էր⁷¹, որի ճարտարապետն էր նախկին երիտթուրք վարչապետ Իսմեթ Ինյոնյուն: Կարևոր է փաստել նաև, որ 1960-ականների երկրորդ կեսին Թուրքիայի քաղաքացի հույների շրջանում ևս լայն թափ ստացավ արտագաղթը: Վախից դրդված Թուրքիայից փախչող հույների գաղթը չկարողացավ կանգնեցնել անգամ Հունաց տիեզերական պատրիարք Աթենագորասը, որը հանդես եկավ հույներին ուղղված կոչով՝ չլքել Թուրքիան⁷²: Թուրքիայում բնակվող հույների վերջին բեկորների շրջանում արտագաղթը խթանող կարևոր ազդակներից էր նաև 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածի օկուպացիան և հակահունական ատելության շարունակումը՝ պետական ու հասարակական մակարդակներով: 1978 թ. իրականացված մի հարցումի համաձայն՝ Ստամբուլում այդ ժամանակ բնակվող 7822 հույների մեծ մասը ցանկություն էին հայտնել արտագաղթել Թուրքիայից⁷³:

Այսպիսով, 1964 թ. Թուրքիայից պարտադիր և «կամովի» արտաքսվեցին ավելի քան 40000 հույներ և սա, ըստ էության, 1923 թ. բնակչության փոխանակման պայմանագրից հետո հույների ամենազանգվածային արտագաղթն էր, որը կործանիչ հարված հասցրեց հունական համայնքին: Այդ և հետագա տարիների չդադարող արտագաղթերի հետևանքով հունական համայնքը Թուրքիայում շարունակեց պահպանել լոկ սիմվոլիկ ներկայություն, և այսօր այդ երկրում ապրող հույների թիվը ընդամենը 1500 է: Եվ չնայած այս փոքր թվով խորհրդանշական ներկայությանը՝ հունական հա-

69 Cindoruk H., 6-7 Eylül Olayları; 6-7 Eylül Olayları Davası (Hazırlayan Emine Gürsoy Naskali), İstanbul, «Kitabevi», 2007, s. xviii.

70 Նույն տեղում:

71 Տե՛ս Cetinoğlu S., նշված հոդվածը:

72 Տե՛ս Demir H., Akar R., նշված աշխ., էջ 91.

73 Տե՛ս նույն տեղում, էջ 142:

մայնքը շարունակում է մնալ որպես թուրքական այլատյացության գլխավոր թիրախներից մեկը, ինչը դրսևորվում է թե՛ պետական հռետորաբանության և թե՛ հասարակական լայն զանգվածների մտածողության ու ընկալման մեջ:

Ռուբեն Հ. Մելքոնյան – ԵՊՀ, թուրքագետ, ունի տպագրված 5 մենագրություն, 6 տասնյակից ավելի գիտական հոդվածներ, 2 բուհական դասագիրք: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Թուրքիայում բնակվող քրիստոնյա փոքրամասնությունների խնդիրները, պետության կիրառած խտրական քաղաքականությունը, Թուրքիայի Հանրապետության պատմության որոշակի փուլերը, պատմության և ժամանակակից թուրքական գրականության փոխառնչությունները, հայկական թեմատիկայի արտացոլումը թուրքական գրականության մեջ և այլն:

Summary

THE DEPORTATION OF GREEKS FROM ISTANBUL IN 1964

Ruben H. Melkonyan

Key words – Young Turks; Kemalists; non-Muslim minorities; Lausanne; Greek citizens living in Istanbul; discriminative policy; monoethnic Turkey; Ecumenical Patriarchate of Constantinople; Cyprus; deportation.

It's widely known that the history of Ottoman Empire is full of examples of state persecutions, discrimination, massacres and genocides against Christians. The aspirations to create monoethnic, that is Turko-Islamic state became more obvious during the government of the Young Turks. The same policy was adopted by the authorities of the Republic of Turkey established in 1923. This fact can be explained by following circumstances. First of all, Turkish state had already become institutionally hostile against all non-Turkish nations. Besides, the majority of the founders of Turkey were former Young Turks, the bearers of nationalist ideology. However, there are specialists, including the Turks, who bring the period of government of Young Turks even up to 1960 and ascribe some elements of young Turkizm to the Democratic Party which was in power in 1950–60s. Main periods of the policy of discrimination against non-Muslim minorities in the history of Turkish Republic were: 1. Exchange but in reality exile of Greeks in 1923 2. The “20 classes” draft in 1941 3. “Tax of Wealth” in 1942 4. Pogroms of 6–7 September 1955. However, the comparison of facts shows that the last and one of the most important links of this chain was the exile of the Greeks from Istanbul in 1964 which is not sufficiently examined yet. On March 16, 1964 the government of Turkey officially stated that it unilaterally considered invalid the agreement signed between Turkey and Greece in 1930. This meant the emergence of legal basis for exile of the Greek citizens living in

семейными и брачными узами с греками, являющимися гражданами Турции, и высылка одних предполагала высылку других. Изгнание греков в 1964 году стало важнейшим этапом последовательной политики этнической чистки, проводимой в Турции.

REFERENCES

1. **Akcoğlu Y.**, Anidzvadz aryudzi bnajnjumy, Yerevan, “Djartaraget”, 2007. **(In Armenian)**
2. **Melkonyan R.H.**, “Unecvadzki harky” kam tntesutyany “turkacman” kaghakakanutyuny hanrapetakan Turkiayum // Tyurkagitakan ev osmanagitakan hetazotutyunner (Ruben Safrastyani xmbagrutyamb), h. 5, Yerevan, “Asoghik” hratarakhutyun, 2008, edj 127–143. **(In Armenian)**
3. **Melkonyan R.H.**, Teghanunneri popoxutyuny vorpes turkacman kaghakakanutyany baghadrich, 21-rd dar, Yerevan, “Noravank” gitakrtakan himnadrami handes, 2009, tiv 6, edj 30–37. **(In Armenian)**
4. **Melkonyan R.H.**, “Etnik zorakoch” Turkiayi Hanrapetutyunum (1941–1942 tt.), Lraber hasarakakan gitutyunneri, HH GAA, Yerevan, 2012, tiv 2–3, edj 42–50. **(In Armenian)**
5. **Melkonyan R.H.**, 1955 tvakani septemberi 6–7-i depkery (Turkiayum kristonya pokramasnutyunneri dem brnutyunneri hertakan drsevorumy) // Arevelagitutyany harcer (gitakan hodvadzneri parberakan joghovadzu), xmbagir: Gurgan Melikyan, Yerevan, EPH hrat., 2013, h. 8, edj 144–156. **(In Armenian)**
6. **Melkonyan R.H.**, Hayoc ceghaspanutyany kazmakerpichneri ev irakanacoghneri herosacman gordzyntacy Turkiayum (1920–akanner), Patmabanasirakan handes, Yerevan, 2015, tiv 2 (199), edj 61–71. **(In Armenian)**
7. **Melkonyan R.H.**, Turkakan lezvakhakakanutyany azgaynamolakan ughvadzutyany shurj, Arevelagitutyany harcer (gitakan hodvadzneri parberakan joghovadzu), xmbagir: Gurgan Melikyan, Yerevan, EPH hrat., 2016, h. 11, edj 110–118. **(In Armenian)**
8. Noveyshaya istoriya Turcii, Moskva, izdatelstvo “Nauka”, 1968. **(In Russian)**
9. **Sahakyan L.S.**, Teghanunneri turkacumy Osmanyany kaysrutyunum ev hanrapetakan Turkiayum, Monreal, “Arod”, 2010. **(In Armenian)**
10. **Ter-Matevosyan V.H.**, Fashizmi drsevorunnery Turkiayum: tesutyany mi kani harcer, Jamanakacic Evrasia, hator III (2), Yerevan, 2014. **(In Armenian)**